

# ՀԱՅՐ ԶԱԻՆ ԽԱՉԸ ՀԱՆՈՒԱԾ

Հրաչ Արզումանեան

«Նոր Օր»ի Եարամ, Օգոստոս 20, 2005-ի թիւին մէջ Սամուէլ Իլանճեան կը փորձէ խաչը հանել Դոկա. Զաւէն Արզումանեանը, որովհետեւ ան համարձակած է գուսպ կերպով քննադատել ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան որոշումը՝ փրկելու Մելգոնեան կրթական Հաստատութիւնը իր հարիւրամեակի նախօրեակին: Իլանճեան կրնար քաղաքակիրթ կերպով յայտնել իր գաղափարները կամ լաւ լուսաբանութիւններ, եթէ այդ էր իր նպատակը, փոխանակ սինիզմով, ցեխարձակումով եւ զրպարտութիւններով վարկաբեկելու մեր եկեղեցւոյ արժանաւոր հոգեւորական մը: Այս ընթացքով, Իլանճեան արժէքազրկած կ'ըլլայ իր ապացոյցները, եթէ կային փաստեր իր ըրածներուն մէջ եւ վարկաբեկած՝ ինքզինք:

ՀԲԸՄ-ի նման միութիւն մը իր հարիւրամեակը կը ծրագրէ եղեր տօնել գալ տարի եւ տակաւին որեւէ տեղ այդ չէ յիշուած կամ ծանուցում չէ եղած: Ինչո՞ւ, պիտի հարցնեն շատեր: Պրն. Սամուէլ Իլանճեան կարգ մը տեղեկութիւններ տայէ ետք կ'ըսէ. «Կը ներէք որ առայժմ յաւելեալ տեղեկութիւն պիտի չտանք, ձեզմէ գաղտնի պահելու միտումով»: Եթէ եղած այս արտայայտութիւնը հեզնական է, ապա ինչպէ՞ս պիտի զանազանենք իրականէն, երբ գրութիւնը ամբողջութեամբ մաղձոտ է եւ սպառնական: «...Այստեղի ՀԲԸՄիութեան ղեկավարներուն, որոնցմէ շատեր ձեր հօտին մաս կը կազմեն եւ նոր կառուցուող եկեղեցւոյ ալ շինութեան բարերարներն են...»: Ուրիշ տեղ մը եւս կառուցուող եկեղեցիին բարերարները կը յիշուին «Հիմա որ ազգային բարերարներու նուիրատուութեամբ եւ մեծածախս գումարներով նոր եկեղեցի կը կառուցուի, աշխատանք տարէք անդամներու թիւը բարեխաւելու...»:

Անշուշտ բացէ ի բաց չ'ըսուիր թէ բարերարները կրնան իրենց խոստացած գումարները չտալ, քանի որ Դոկա. Հայր Զաւէն Արզումանեանը իրենց միութեան դէմ բաներ մը գրեր է թերթին մէջ: Արդարեւ, Հայր Զաւէն ՀԲԸՄ-ի դէմ չէ գրած, այլ գովարանած է անոր անցեալի մեծութիւնը: Ան միայն քննադատած է այսօրուան ղեկավարութեան առած սխալ որոշումը:

Վերադառնանք ՀԲԸՄիութեան տօնակատարութիւններուն:

ՀԲԸՄիութեան հարիւրամեակին առիթով արդէն իսկ պատրաստուած է Միութեանս պատմութիւնը ընդգրկող մեծածաւալ, գունաւոր, պատկերազարդ եւ խիստ տպաւորիչ երկու հատորներով բազմալեզու յուշամատեան մը»: Արդեօք այդ յուշամատեանին մէջ պիտի յիշուի Մելգոնեան կրթական Հաստատութեան գոցուելուն մասին: Մինչեւ ՄԿՀ-ի գոցուելուն լուրերուն դուրս սպրդիլը ՀԲԸՄ-ի գաղտագողի որոշումներու սենեակէն, անկարելի է ոսկետառ գրութիւններով չ'իշել ՀԲԸՄ-ի ըրածները մեր ազգին, որուն բացարձակապէս արժանի է, սակայն վերջին երկու տարիները, 99-երորդ եւ 100-երորդ տարիները, կը թելադրեմ որ գրուին կուպրով:

Հարց կը տրուի թէ Հայր Զաւէնը Վերջին քանի մը տարիներուն, Մելգոնեան կրթական Հաստատութիւն այցելած է կամ դպրոցին արտաքին եւ ներքին կացութիւններուն մասին որեւէ գաղափար ստացած է: Եթէ այցելելը այդքան կարեւոր կը նկատուի, ես այցելած եմ 75-ամեակին առթիւ Յիսուս տարիներ առաջուայ համապատկերը չէր ներկայացներ: Զրամբարը չկար: Տեղը չէնքեր շինուած էին որոնց եկամուտին մասին որեւէ տեղ չէ յիշուած Մելգոնեանի հաշիւներուն մէջ: Ուրիշ նոր կառուցուածքներ ալ կային, որոնց պէտք ունէինք մեր ժամանակին: Տնօրէնուհին մեծ ծրագիրներ ներկայացուց ուսանողութեան թիւն ու կրթութեան մակարդակը բարձրացնելու մասին: Նախ Աստուծոյ վրայ, ապա ՀԲԸՄ-ի վրայ դրած էր ամբողջ յոյսն ու հաւատքը: Սակայն, անկէ ետք հետզհետէ ուսանողութեան թիւը պակասած է:

ՀԲԸՄ-ի ըրած ծանուցումներուն մէջ կարդայի, որ արդարանալի պատճառներէն մին այս է Հաստատութեան փակուելուն: Հարց մը տանք: Ի՞նչ պատահեցաւ: Պատահածը այն էր որ ծնողներուն նամակներ զրկուեցան որ իրենց զաւակները յաջորդ տարին ՄԿՀ չղրկեն: Այդ նամակները զրկողը ո՞վ էր արդեօք: Մի փախնաք, ըսէք, ՀԲԸՄիութիւնն էր: Մնացեալ արդարանալի պատճառներն այ նամակագրութեան նման ծրագրուած քայլեր եղած են:

Այո, «Մելգոնեան կրթական Հաստատութեան փակման հարցը երեսուն տարիներէ ի վեր զոյուլթիւն ունի...», բայց չփակուեցաւ, որովհետե՛ւ այն ատենները կար Ալեք Մանուկեան անունով դպրոցատէր անձ մը:

Թիւր շատ ճիշդ է: Երեսուն տարիներ առաջ ՀԲԸՄ-ի աղաներէն մին ըսած է. «Ես ադ տպրոցը պիտի գոցեմ»: Միեւնոյն անձին ծանօթացայ մօտ չորս տարիներ առաջ Նիւ Եորք ճաչարաններէն մէկուն մէջ, ուր հրաւիրուած էինք յարգելի անձի մը տարեդարձին առիթով: Յուցամտօր աչքս խոթելու չափ դէմքիս մօտեցնելով ու շարժելով ըսաւ ինձի, երբ լսեց որ մելգոնեանցի եմ «Ես ադ տպրոցը պիտի գոցեմ»:

Անդրադառնալով «Նոր կեանք»ի Օգոստոս 26, 2006 թուին մէջ երեւցած ենովք Պալիքեանի չուանը փրթած գրութեան, չարժեր անդրադառնալ անոր: Եթէ պատասխանելու ըլլամ, պէտք է միեւնոյն ոճը գործածեմ. Վրայէն ցատկեցի որ նոյնիսկ ոտքերս չաղտոտին:

Նախքան վերջացնելս կ'ուզեմ որ հասկնալի ըլլայ թէ իմ ծնողքս Եղզ-դատցի եղած են: Ես ծնած եմ Պէյրութ, իսկ Հայր Զաւէնի ծնողքը Էվէրեկցի եղած են եւ ինք ծնած է Եգիպտոս: Ազգականական կապեր չունին:

Ֆիլատելֆիա, Փեմս.